

**«ԱՍՊԵՏ» ՏԻՏՂՈՍԻ ԵՎ «ԱՍՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՓՈՐՁ**

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վաղ միջնադարի հայ մատենագիրների վկայություններից հայտնի է, որ հին Հայաստանում գոյություն է ունեցել «ասպետ» տիտղոսը և «ասպետություն» կոչված գործակալությունը: Դրանք եղել են Բագրատունի նախարարական տոհմի ժառանգական արտոնությունները, որի պատճառով էլ Բագրատունիների տոհմավազը կոչվել է նաև «Ասպետ», իսկ տոհմի ճյուղերից մեկը (Սպերում)¹՝ «Ասպետունի»²:

«Ասպետ» տիտղոսի և «ասպետություն» գործակալության նախնական բնույթի պարզաբանման գործում մեզ համար ուղեցույց են ծառայել Մովսես Խորենացու և Անանունի ցուցումները: Նախ, մեր ընդգծումներով բերենք պատմիչների համապատասխան տողերը, որոնք գրված են Հայաստանում առաջին Արշակունի գահակալի (ըստ Խորենացու՝ Վաղարշակի, ըստ Անանունի՝ Արշակի) իրականացրած մի շարք բարեփոխումների կապակցությամբ:

Խորենացի. 1. «Քանզի յետ սանձահարելոյ զՄակեդոնացիս եւ դադարելոյ պատերազմացն՝ սկիզբն առնէ բարեգործութեանց Պարթեւն քաջ. նախ եւ առաջին փոխարէն բարեաց հատուցանելով առնն զօրաւորի եւ իմաստնոյ, որ ի Հրէիցն՝ Շամբատայ Բագաւատ. տալով նմա իշխանութիւն ազգաւ թագադիր լինել Արշակունեաց. եւ որ ի նմանէ ծնեալ ազգ՝ լինել կոչմամբ յանուն նորա Բագրատունի, որ է այժմ մեծ նախարարութիւն ի մէջ աշխարհիս: Քանզի այս Բագրատ նախաձեռն ընծայ ըստ կամաց մատոյց զինքն Վաղարշակայ յառաջ քան զպատերազմունսն Արշակայ ընդ Մակեդոնացիսն, եւ սա ի դրան արքունի, իսկ ի ծայրս հայերէն խօսից կռղմեակալ, իշխան բիւրուց եւ հազարաց, յարեւմտից կուտէ»³: 2. «Արդ՝ նախ եւ առաջին օրինադրէ թագաւորն զինքն եւ զտուն իւր, սկիզբն առնելով ի գլխոյ իւրմէ եւ ի թագէ: Եւ զկռչեցեալն Բագաւատ, որ ի Հրէիցն, շնորհակալութիւն նմա վասն յառաջագոյն անձնատուր ձեռնտուութեանն առ թագաւորն եւ միամտութեանն եւ քաջութեանն, զյառաջ ասացեալ տանուտիրական պատիւն ազգին պարգեւելով. եւ իշխել նմա թագ ի գլուխ դնել թագաւորին, եւ կռչել թագադիր, այլ եւ ասպետ. եւ առանց ոսկոյ եւ ականց, զկրտսեր մարգարիտն կրեքտակեան վարսակալ ածել՝ յորժամ յարքունիս եւ ի տան թագաւորին շրջիցի»⁴: 3. «Իսկ յետ այսր ամենայնի մեհեան շինեալ յԱրմաւիր՝ անդրիս հաստատէ արեգական եւ լուսնի եւ իւրոց նախնեացն: Եւ աղերսեալ որ ի Հրէիցն Շամբատայ Բագաւատ, որ եւ թագադիր եւ ասպետ, հանդերձ հարկեցուցանող բանիւք, թողուլ զօրէնս հրէութեանն, եւ պաշտել զկուռս. զոր ոչ առեալ յանձն՝ ըստ կամաց թողուլ զնա արքայն Վաղարշակ»⁵:

¹ Ասպետ տիտղոսը և Ասպետունի տոհմունքը նույն փոխհարաբերության մեջ են միմյանց հետ, ինչ Մաղխազ և Մաղխազունի, Մադաթեա և Մադաթեալեան զուգերի համապատասխան անգամները (սե'ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с. 417):

² «Մովսէսի Խորենացու Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 104—105:

³ Նույն տեղում, էջ 110:

⁴ Նույն տեղում, էջ 117:

Անաեռու. 1. «Սմա (Արշակին—Ս. Պ.) ընդ առաջ ելանէ Բագարատն Փառազեան յորդոցն Արամենակայ նախարար մեծ հանդերձ զօրու: Մատուցանէ նմա պատարագ ոսկի եւ արծաթ. եւ զարդարէ զնա ի սեղր եւ ի վակաս. պսակէ զնա ի թագ հայրենի. եւ նստուցանէ զնա ը վերայ ոսկիապատ ակա-նակուռ զաւոյիցն. եւ տայ նմա զգուստր իւր ի կնութեան»⁵: 2. «Զսա (Բագարատին—Ս. Պ.) արար Արշակ արքայ ասպետ Հայաստան երկրին, որ էր իշխան եւ հրամանատար, ամենայն թագաւորութեանն հրամանաց զլուխ, եւ հայր արքայի, եւ եղբայր. որում ետ իշխանութիւն տէրութեանն այնորիկ»⁶:

Ինչպես տեսնում ենք, Մովսես Խորենացին Բագարատնի նախարարական տոհմի անվանադիր նախնի Շամբատ Բագարատին (ըստ Անանունի՝ Բագարատ Փառազեան) «թագադիր, այլ եւ ասպետ» կոչելով⁷, զատորոշում է նրա համատեղած երկու գործակալությունները: Այս առթիվ հիշենք, որ, մերժելով թագադրի և ասպետի գործակալությունների նույնության մասին ենթադրությունը, Ստ. Մալխասյանցը գրում էր. «Սակայն Խորենացին շեշտում է տարբերությունը այս երկու պաշտոններին—«կոչել թագադիր, այլ և ասպետ»⁸: Միաժամանակ, Խորենացու և Անանունի հաղորդած տեղեկությունների համադրումը օգնում է ավելի ճիշտ հասկանալու նրանցից յուրաքանչյուրի ունեցած պատկերացումն ինչպես թագադրի, այնպես էլ ասպետի գործակալության բնույթի վերաբերյալ:

Անանունի առաջին վկայության «...պսակէ ղնա (Արշակին—Ս. Պ.) ի թագ հայրենի...»⁹ տողը բացահայտում է Բագարատի պաշտոնի բնույթը որպես թագադրի¹⁰: Սրան համապատասխանում է Խորենացու երկրորդ վկայության «... եւ իշխել նմա թագ ի գլուխ ղնել թագաւորին...»¹¹ տողը¹²: Ուրեմն, Բագարատի համատեղած առաջին՝ թագադրի գործակալության բնույթի վերաբերյալ Խորենացու և Անանունի ունեցած պատկերացումները լրիվ համընկնում են: Սակայն, վիճակն այլ է, երբ մեր պատմիչները անդրադառնում են Բագարատի համատեղած երկրորդ՝ ասպետի գործակալությանը: Վերջինս բնութագրելիս Անանունը գործածում է հենց «ասպետ» տիտղոսը, Բագարատին կոչելով «...ասպետ Հայաստան երկրին, որ էր իշխան եւ հրամանատար, ամենայն թագաւորութեանն հրամանաց զլուխ...»¹³: Խորենացին «ասպետ» տիտղոսը չի գործածում: Ըստ նրա, Բագարատը միայն «...կողմնակալ, իշխան բիւրուց եւ հազարաց...» էր (ընդ որում, «ի ծայրս

5 Ս ե բ է ո ս ի ե պիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 9:

6 Նույն տեղում, էջ 10:

7 Խ ո Ր Ե Ն ա ջ ի, էջ 110, էջ 117:

8 Ը Մ Վ Ս Ե Ս Խ Ո Ր Ե Ն ա ջ ի, Հայոց պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1940, էջ 281—282, ծան. 117:

9 Ս ե բ է ո ս, էջ 9:

10 Անանունի նախորդ և հաջորդ տողերը վերաբերում են թագադրին՝ լրացուցիչ մանրամասներ հաղորդելով թագադրման ծեսի վերաբերյալ:

11 Խ ո Ր Ե Ն ա ջ ի, էջ 110:

12 Նույն համապատասխանությունն է առկա Խորենացու առաջին վկայության «...Շամբատ տայ Բագարատ. տալով նմա իշխանութիւն ազգաւ թագադրի լինել Արշակունեաց...» տողում (Խ ո Ր Ե Ն ա ջ ի, էջ 104):

13 Ս ե բ է ո ս, էջ 10: Անանունի այս վկայության առթիվ Հ. Մանանդյանը գրում էր. «Բագարատունիների «ասպետ» տիտղոսի մասին, որ դեռ վերջնական կերպով մեկնված չէ, ուշագործվ է Սերեոսի (Անանունի) վկայությունը, որը թեև առասպելական բնույթ ունի, սակայն հետաքրքիր լուսաբանություն է տալիս «ասպետություն» բարձր պաշտոնին» (Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 328):

հայերէն խօսից, ...յարեմտից կուսէ») ¹⁴։ Անտարակույս, այս դեպքում ավելի ճշմարտանման է հորինացու և ոչ թե Անանունի վկայութիւնը, որովհետեւ, ընդունված կարգի համաձայն, «ամենայն թագաւորութեանն հրամանաց գլուխ» մինչավատատիրական Հայաստանում համարվում էր միայն թագավորն ինքը ¹⁵։

Ուշադրութիւն դարձնենք այն հանգամանքին, որ հորինացու առաջին վկայութեան մեջ Բագարատի համատեղած պաշտոններից (գործակալութիւններից) երկրորդը բնութագրող «կողմնակալ» բառը գործածված է այլ իմաստով։ Սովորաբար «կողմնակալ»-ը զուգորդվում է «ստրատեգոս» տերմինին, որով նշվում էր Մեծ Հայքի «ստրատեգիա» («կողմնակալութիւն») կոչված ՁՁ վարչական և ռազմավարչական միավորներից յուրաքանչյուրի կառավարիչը ¹⁶։ Տարբերութիւնն այստեղ դրսևորվում է նախ նրանում, որ Բագարատը հանդես է գալիս ոչ թե որպէս սովորական կողմնակալ (ստրատեգոս), այլ թի ծայրս հայերէն խօսից» նշանակված գործակալ, ապա՝ նրանում, որ այս «կողմնակալ»-ի դիմաց Անանունի երկրորդ վկայութեան մեջ բերված է «ասպետ» տիտղոսը։ Այս ակնհայտ տարբերութիւնը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ Անանունի երկրորդ վկայութեան մեջ Բագարատը «ասպետ» է կոչված որպէս նույն այն գործակալը, որը հորինացու առաջին վկայութեան մեջ բնութագրվում էր թի ծայրս հայերէն խօսից կողմնակալ բառերով։

Եթե հորինացին Բագարատին համարում էր թի ծայրս հայերէն խօսից կողմնակալ... յարեմտից կուսէ», ապա Ագաթանգեղոսը նրա սերունդներին՝ Բագրատունի ասպետներին, հատկացնում էր հյուսիսային և հյուսիս-արևմուտքյան կողմերը, քանի որ նրանց բուն գործն համարում էր Մեծ Հայքի կովկասյան և արևելապոնտական սահմանների պաշտպանութիւնը։ Այդ են վկայում Ագաթանգեղոսի հունարեն նորահայտ Վարքի՝ այն տողերը, որոնցում Գրիգոր Լուսավորչին Կեսարիա ուղեկցած հայ մեծատոհմիկ նախարարների թվում հիշատակվում է նաև «ասպետութեան իշխան»-ը։ Ահա այդ տողերը. «(Տրդատի) ... հրավերի համաձայն ներկայացան երեք թագավորները, այն է Լազերի, Վրաց և Աղվանից, ապա հերթականութեամբ թագավորներից հետո առաջին տեղում գտնվող Անգեղտան և Անձիտի կուսակալը, երկրորդ՝ Աղձնիքի մեծ բղջիւրը, երրորդ՝ Մարգերի կուսակալը, չորրորդ՝ ասպետութեան իշխանը, ուր պաշտպանում էր Կովկասյան լեռների կողմերը և Ճանիքը, հինգերորդ՝ Մամիկոնյանների նախարարը, սպարապետը... վեցերորդ՝ կուսակալը այսպես կոչված Կորդվաց աշխարհի, որը գտնվում է Անդրկողովրտների մոտ, յոթերորդ՝ իշխանը Մեծ Մոփքի, որը Միջագետքի մոտ է գտնվում, ութերորդ՝ Դուգարացոց աշխարհի առաջնորդը, որը ևս բղջիւրի աստիճան ունի...» ¹⁷։

Ագաթանգեղոսի հունարեն նորահայտ Վարքի վերոբերյալ հաղորդումը սխալ թարգմանութեան հետևանք չէ, որովհետեւ հաստատվում է «Քարթլիս ցխովրեբայի» և Կասիոս Դիոնի վկայութիւններով։ Նկարագրելով, թե ինչպես հետապնդելով Հայաստանն ասպատակած «հյուսիսականներին» Մաբատ Բյուրատյանը (Բագրատունի), անցնում է Կուր գետը և հարձակվում նրանց

¹⁴ Խորենացի, էջ 105։

¹⁵ С. Т. Еремян, Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху (ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1948, № 11, էջ 70)։

¹⁶ «Հայ ժողովրդի պատմութիւն», հ. 1, Երևան, 1971, էջ 840—842։ «Մեծ Հայքի թագավորութեան ամբողջ տերիտորիան բաղկացած էր 124 զավառից, որոնք ընդգրկված էին 32 կողմնակալութիւնների՝ ստրատեգիաների և արքունի տան՝ ոստանի մեջ» (նույն տեղում, էջ 841)։

¹⁷ Ագաթանգեղոսի Պատմութեան հունական նորահայտ խմբագրութիւնը (Վարք)», Թարգմանութիւնը հունարեն բնագրից Հ. Բարթիկյանի, առաջաբան և ծանոթագրութիւններ Արամ Տեր-Լևոնդյանի (սեչմածին), 1966, № Թ—Ժ, էջ 45)։

վրա, «Քարթլիս ցխովրեբան» շարունակում է. «...Ապա բանակը շարժվեց հայերից (սոմեխներից) դեպի հյուսիս, բոլորը փախուստի դիմեցին և ցիր ու ցան եղան: Սրանց հետամուտ եղավ Սմբատը, որը քանիցս վերավորվել էր, և մինչև գիշեր կոտորեց բոլոր օսերին և լեզգիներին (լեկերին), որոնք քիչ մնացին: Իսկ վրացիք ավելի մնացին՝ փախուստի ուղիների հետ ծանոթ լինելու շնորհիվ... Ապա Սմբատը հաղթանակով մտավ Քարթլի, ավերեց [ամբողջ] Քարթլին բերդերից ու քաղաքներից զատ: Իսկ բերդերի ու քաղաքների հետ չէր կռվում, քանի որ պատրաստ չէր՝ շտապ ելնելու պատճառով»¹⁸:

Կասիոս Դիոնի հաղորդումը վերաբերում է այն ժամանակաշրջանին, երբ 163 թ. Հայաստանը նվաճած հռոմեացիների դեմ խռովություն էր բռնկել: Հայերին ավելի մեծ ապստամբության շնչելու նպատակով, Մարկոս Ավրելիոս կայսրը փոքր-ինչ մեղմ վարվեց նրա մասնակիցների նկատմամբ: Ինչպես Դիոնն է վկայում. «...Տրդատ սատրապին, որը Հայաստանում խռովություններ էր առաջ բերել և սպանել էր հենիոխների թագավորին ու նաև սուրը հանել էր սպառնալով Վերոսին, որն այդ բանի համար նրան հանդիմանել էր՝ Մարկոս Ավրելիոսը փոխանակ սպանել տալով՝ արքայից Բրիտանիա»¹⁹, Հայ և հենիոխ հակառակորդների ինքնությունները պարզաբանված են Ս. Տ. Երեմյանի հետևյալ տողերում. «Տրդատի դեմ հռոմեացիների դուրս բերած հենիոքների թագավորը, անշուշտ, «Մաքեդոնների և հենիոքների թագավորության» արքայիկն էր, որի տերիտորիան գտնվում էր Պարթսարյան լեռների ծովահայաց անտառախիտ փեշերին... Ըստ հին հայկական աղբյուրների՝ հաղորդում (կոչվում էր նաև Ճանիք—Ս. Պ.), Սրանց հարևան էր Պոնտական-Պարթսարյան լեռների հարավային փեշերին գտնվող Բագրատունիների «ձեռնակն իշխանություն» գավառը, որը Սպերն էր՝ Ճորոխի հովտում: Մաքեդոնները և հենիոքները առաջին անգամ չէր, որ Հռոմի սաղրանքով այս կողմերից ներխուժում էին Հայաստան և ավարառության ենթարկում: Եթե այդ այդպես է, ապա նախարար Տրդատը պետք է լինի այն Տրդատ Բագրատունին, որի մասին հորենացին խոսում է «Տիգրան Վերջինին» նվիրված նախորդ գլխում»²⁰:

Վերոշարադրյալը կասկած չի թողնում, որ, իսկապես, Բագրատունի ասպետները «ի ծայրս հայերեն խօսից կողմնակալ» եղել են ոչ թե «յարեմտից կուսէ», այլ հյուսիս-արևմտյան կողմերում: Նշանակում է, «ասպետ» տիտղոսի հորենացու տված մեկնաբանությունը՝ «ի ծայրս հայերեն խօսից կողմնակալ... յարեմտից կուսէ», պետք է կամ այնպես հասկանալ, որ նա «յարեմտից կուսէ» ասելով նկատի ունի Մեծ Հայքի հյուսիս-արևմուտքում ընկած Սպերը²¹, կամ այդ բառերը պետք է համարել ավելի ուշ ժամանակների մտածողության (հնարավոր է նաև շփոթի) արգասիք²²:

Ի դեպ, «ասպետ»-ի ոչ թե տանուտիրական (նահապետական-ժառանգական), այլ գործակալական տիտղոս լինելու մասին է խոսում Բագրատունիների Սպերի ճյուղի կրած Ասպետունի (<«ասպետ-ունի») տոհմանունը²³, որով-

¹⁸ Լ. Մելիքս-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 156—157:

¹⁹ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 785:

²⁰ Նույն տեղում, էջ 785:

²¹ Ժիշտ նույն կերպ Անանունը Անգեղաուն գավառը տեղադրում էր «ի կողմանս արեմտից» (Սեբեոս, էջ 7), երբ իրականում այն բռնում էր Մեծ Հայքի հարավ-արևմտյան անկյունը:

²² Նկատի առնենք, որ Մեծ Հայքի հարավ-արևմուտքում ընկած Անգեղաունը նույնպես Բագրատունիների հին տիրույթներից էր (Սեբեոս, էջ 6—7):

²³ Տե՛ս Ս. Տ. Երեմյան, Բագրատունիների թագավորությունը IX դ. վերջին և X դ. առաջին կեսին, քարտեզը («Հայկական սովետական հանրագիտարան», հ. 2, Երևան, 1976, էջ 200—201): Ըստ Երևույթին, այս Ասպետունիների է Պրոկոպիոս Կեսարացին կոչում «Ասպետյաններ» (Λοπεταῖων—Bell. Pers., II, 3, 12, 3. Մարկվարտ, Հայ Բագրատունիները):

հետև Սպերը նրանց տանուտիրույթյունը (ժառանգական տիրույթը) չէր, այլ սոսկ ձեռնական տիրույթը (սերկիր ձեռնական իշխանություն)²⁴։ Եթե Բագրատունիները որպես ասպետներ էին տիրում Սպերին, ապա Պտղմնոսից²⁵ հայտնի Տաթառա չնոս-ի տարածքը հին Հայաստանի ծայր հարավում²⁶ կարող էր լինել նրանց ձեռնական երկիրը²⁷ ոչ թե որպես ասպետների, այլ թագադիրների (հիշենք, որ այստեղ էր գտնվում նաև սեպագիր արձանագրությունների Արդինի-Մուսասիրը՝ ուրարտական արքաների թագադրման վայրը)²⁸։ Ուրեմն, Բագրատունիների բնօրրանը պետք է լիներ Անգեղտունը, ինչը և բխում է Անգեղտան իշխանների Անանունի բերած տոհմաբանությունից²⁹։

«Անպետ» գործակալական տիտղոսի նախնական իմաստի բացահայտման մի շարք փորձեր են եղել։ Դրսնցից հաջողվածը, մեր կարծիքով, Ն. Մառինն է, չնայած Հ. Աճառյանը սխալ է համարում նրա առաջարկած ասպետ <*ասուպետ (սկոդմնապետ, կոդմնակալ) — իրան. asu «կոդմ» + pati «պետ» ստուգաբանությունը։ Իսկապես էլ, asū (նոր պարս. su «կոդմ», «ուղղություն») բառի պահլավերեն նախաձևն է sūk կամ asūk, որոնցով բարդվելու դեպքում տիտղոսն ունենալու էր *սուկպետ կամ *ասուկպետ տեսքը³⁰։ Ինչպես տեսնում ենք, Հ. Աճառյանի իրավացի առարկությունը վերաբերում է բառի (ավելի ճիշտ նրա աս — բաղադրիչի) ստուգաբանությանը, ուստի և այն չի կարելի տարածել Ն. Մառի տված ասպետ — կոդմնապետ, կոդմնակալ բացատրության վրա, մանավանդ, որ վերջինս ունի այնպիսի մի հենարան, ինչպիսին է Խորենացու և Անանունի հաղորդած տեղեկությունների համադրումից բխող ասպետ — ի ծայրս հայերեն խօսից կոդմնակալ իմաստային համարժեքությունը։

Ասպետ բառի աս — բաղադրիչի ծագման վերաբերյալ գոյություն ունեցող մյուս կարծիքները կամ իրենց մեկնաբանությունների մեջ են խոցելի, կամ անհամոզիչ են հնչյունաբանական անցումների սխալականության պատճառով։ Ուսումնասիրողների մեծ մասի կարծիքով «ասպետ» տիտղոսը իրանական *aspapati «ծիավոր ազնվական, հեծյալ իշխանավոր» չավանդված բառի (<aspa «ծի» + pati «պետ») սղված ձևն է³¹։ Ստ. Մալխասյանցը, ասպետ <*aspapati ստուգաբանությունն ընդունելով հանդերձ, բառը պարսկերեն sephahbad-ի հետ նույնացնող տեսակետի դեմ անում է հետևյալ առարկությունները. նախ, այս դեպքում ստիպված ենք ընդունելու, որ «...ամեն մի նախարար, որ սեփական հեծելազորքի գունդ ուներ, կարող էր կոչվել ասպետ», ապա՝ «...ոչ մի տեղ չենք գտնում հիշատակություն, որ հայոց զորքի մեջ հեծելազորքը առանձին պետ ունենար, իսկ հետևակը՝ առանձին»³²։ Առարկությունները ճիշտ են, բայց ոչ պակաս հաջողությամբ դրանք կարելի է բերել նաև ասպետ բառին «ծիավոր ազնվական, հեծյալ իշխանավոր» իմաստ վերագրող կարծիքի (հետևաբար, նաև ասպետ <*aspapati

տունյաց ճյուղագրությունը, Վիեննա, 1913, էջ 3, «Պրոկոպիոս Գեսարացի», Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 332, ծան. 11)։

²⁴ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 785։

²⁵ Ptol., VI, 1, 2.

²⁶ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 747։

²⁷ Հավանաբար, Բագրատունիների նախնի Բագարատի ենթակայության տակ էին նաև այս կողմերը՝ Տմորիքը, Կորճաթը և Մարաց ամրոց աշխարհը (նույն տեղում, էջ 835, ծան. 57)։

²⁸ И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968, с. 140.

²⁹ Ս ե բ ե ո ս, էջ 6։

³⁰ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, էջ 274։

³¹ Նույն տեղում, էջ 274։

³² Մ ո վ ո ս ե ն Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի, Հայոց պատմություն, էջ 281—282, ծան. 117։

ստուգաբանության) դեմ: Հնչյունաբանական անցումների տեսանկյունից թույլ են հիմնավորված նաև Ն. Ադոնցի և Մ. էմինի կարծիքները: Հստ. Ն. Ադոնցի, ասպեա <իրան. *viθapati «տոհմապետ»³³, սակայն անհնարին է իրան. viθa — >հայ. աւ— անցումը: Իսկ Մ. էմինի վաղ շրջանի ենթադրության համաձայն, ասպեա <ասպահապետ (*spahpat > sephahbad)³⁴, բայց, ինչպես Ստ. Մալխասյանցն է նկատում, «...sephahbad-ը հայերեն սպահապետն է կամ սպարապետը»³⁵:

Հեռու մնալով վերոբերյալ անհամոզիչ մեկնաբանություններից ու ստուգաբանություններից, մենք կամա-ակամա մեր ուշադրությունը պետք է բեռնենք Անանունի և խորենացու հաղորդած տեղեկություններից բխող ասպետ-«ի ծայրս հայերէն խօսից կողմնակալ» իմաստային համարժեքության վրա:

Մեր կարծիքով, քննվող տիտղոսի աւ— բաղադրիչը նախապես ունեցել է *արս— տեսքը³⁶ և «կողմ», «ծայրամաս» իմաստները, այսինքն՝ աւպետ < *արսպետ: Վերոշարադրյալը նկատի առնելով, *արս բառի համար որպես նախածե կարող ենք ընդունել հ.-հ. *perk'— արմատը, որը հայերենում օրինակաբար վերածվելու էր *արս-ի (կամ *հարս-ի)³⁷, Հ.-հ. այս արմատից սերած նույն կամ մոտ իմաստներով բառերի հանդիպում ենք հնդիրանական գրեթե բոլոր լեզուներում. հին հնդկ. pāṇṣu, parśu «կող», pāśva «կողմ», ավեսա. pərəsu «կող», parəsu «կողմ», սկյութ. pars «կող, կողմ», սողդ. *parsak (prs'kh) «կող», պարս. pahlū (< *parθu < *parsu) «կողք», օս. fars «կողմ» և այլն³⁸:

Հնագույն հայերենի *արս («կողմ», «ծայրամաս») բառն է, ամենայն հավանականությամբ, ընկած ոչ միայն ասպետ (< *արսպետ «կողմնապետ, կողմնակալ») տիտղոսի, այլև Բագրատունի տոհմի Անգեղտան ճյուղի նախնիներից մեկի Ասպատ անվան հիմքում (ըստ Անանունի. «Բագարատ ծնալ զԲիւրատ, եւ Բիւրատ ծնալ զԱսպատ»)³⁹: Հավանաբար, Ասպատ-ը անձնանվանաբար կիրառված տարբերակն է ասպետ բառի՝ պատ (<իրան. pati «պետ») նույնական և համարժեք երկրորդ բաղադրիչով⁴⁰: Այս առթիվ Ստ. Մալխասյանցը գրում էր. «Սերեռսը մի անգամ գործ է ածում այս բառի նախնական ձևը — Ասպատ, իբրև հատուկ անուն. բայց սա իսկապես ասպետ մականիւրն է այն Բագարատի, որ առաջին անգամ այս կոչումն ստացաւ Վաղարշակից»⁴¹:

³³ Н. Адонц, *Узл. азг.*, էջ 402:

³⁴ Н. Эмин, *Всеобщая история Вардана Великого*, М., 1865, с. 90.

³⁵ Մովսես Խորենացի, *Հայոց պատմություն*, էջ 281—282, ծան. 117:

³⁶ *Արսպետ > ասպետ անցման տեսանկյունից հիմտ. Արսեաջ փռ = Ասեաջ փռ (Ս. Տ. Երեմյան, *Հայաստանը ըստ Աշխարհացոյցի-ի*, Երևան, 1968, էջ 40), Արավդէն = Երավդէն (Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. Բ, Երևան, 1944, էջ 133), Արշառ = Աշոտ (Н. Адонц, *Узл. азг.*, էջ 246—247), Շաառշ = Շաաշ (Ս. Երեմյան, էջ 6, Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. Դ, Երևան, 1946, էջ 155):

³⁷ Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, I մաս, Երևան, 1940, էջ 34, 38, 50, 58:

³⁸ В. И. Абаев, *Историко-этимологический словарь осетинского языка*, т. I, М., 1958, с. 423, 453 (մյուս ձևերը տե՛ս М. Фасмер, *Этимологический словарь русского языка*, т. III, М., 1971, с. 245):

³⁹ Ս. Երեմյան, էջ 6:

⁴⁰ Իրանական pati բառը պատ ձևով է պահպանված նաև *պարսպատ գործակալական տիտղոսի մեջ, որից էլ *Պարսպատունի (> Պատսպարունի) նախարարական տոհմանունը և վերջինիցս ածանցված Պարսպատունի գավառանունը: Այս տիտղոսի նախնական իմաստը ևս «ծայրամասի պետ, կողմնակալ» էր (հիմտ. իրան. pars «կողմ», «ծայրամաս»):

⁴¹ Մովսես Խորենացի, *Հայոց պատմություն*, էջ 281, ծան. 117:

Անշուշտ, *աբս (սկողմ, «ծայրամաս») արմատն է առկա նաև հին Հայաստանի հյուսիս-արևմտյան ծայրամասի հետևյալ տեղանունների մեջ. Արսեաց փոռ = Ասեաց փոռ. այսպես էր կոչվում Տալք նահանգի սահմանամերձ գավառը⁴², Արսիֆ = Արսիս (այժմ՝ Էրսիս). այսպես էր կոչվում նույն գավառի բնակավայրերից մեկը⁴³, Արսիաճի = Արսիյան (<հայ. *Արսեան, այժմ էլ նույն անունով), այսպես էր կոչվում Տալք նահանգից մինչև Կողքիս ձգվող և Ճորոխի ստորին հոսանքի շրջանը Կուրի վերին հոսանքի շրջանից բաժանող լեռնաշղթան, Արսիյան (<հայ. *Արսեան). այսպես է այժմ կոչվում հիշյալ լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը (3165 մ): Ինչպես տեսնում ենք, վերոբերյալ հին և նոր տեղանունների մեջ *աբս արմատն առկա է ոչ թե ուղղակիորեն, այլ իրենից ածանցված *արսի և *արսեան (երկու դեպքում էլ «ծայրամասային» իմաստով) տերմինների միջնորդությամբ: Դա երևում է Արսեաց փոռ (բառացի՝ «արսիների ձոր») և Արսիֆ = Արսիս (բառացի՝ «արսիներ») տեղանունների հոգնակի ձևերից:

Արսեաց փոռ և Արսիֆ = Արսիս տեղանուններից և դրանք կրած օբյեկտների ծայրամասային դիրքից ելնելով, կարելի է ենթադրել, որ «արսիս»-ներ կոչվել են «արսս»-ում (ծայրամասում) ծառայության մեջ գտնված արքունի սահմանապահ զորամասերը: Վերջիններիս գոյությունն է, կարծես, հաստատում Քարթլիս ցխովրեբան», երբ վերոհիշյալ Սմբատ Բյուրատյանի համար վկայում է, որ Վիրքը (Քարթլին) ասպատակելուց հետո «նա մի բերդ կառուցեց Օձրխեհում, որը Սամցխե է կոչվում, Դեմոթ անունով մի տեղում, Ղազո լեռան կապած, թողնելով մեջը զորամաս՝ ծունդացվոց օգնության համար, քանի որ [ինքն] օձրխեցվոց հետ կուվելու գնաց»⁴⁴: Այս հատվածի հայերեն հին թարգմանությունը (XII դ.) հետևյալն է. «Իսկ Սմբատ հաջողութեամբ մտնալ ի Քարթլ՝ աւերեաց զերկիրն. եւ շինեաց բերդ մի յերկիրն Ունձըրխտոյ՝ զՍամցխէ, եւ եթող անդ զօրս օգնական ծունդացուցն՝ որք հնազանդեցան նմա»⁴⁵:

Հին Մեծ Հայքի հյուսիս-արևմուտքում սահմանամերձ-սահմանապահ վարչական միավորի՝ «արսս»-ի, գոյության և Բագրատունի ասպետներին այն ենթակա լինելու առումով հետաքրքրական է, որ աբս- բաղադրիչը պարունակող հին հայկական տեղանունների ընդգրկած տարածքը մի կողմից սահմանակցում էր Բագրատունի-Ասպետունիների տիրույթը հանդիսացած (և սահմանամերձ) Սպերին, իսկ մյուս կողմից՝ նրանց վերահսկողությանն հանձնված (ըստ Ագաթանգեղոսի հունարեն նորահայտ Վարքի) արևելապոնտական Խաղտիք աղգապալատին և կովկասյան երկրներից Կողքիսին ու Վիրքին:

Ծնարատաշնչյան Մեծ Հայքում այսպիսի սահմանամերձ-սահմանապահ գոտիների գոյության տեսանկյունից ուշագրավ են Արշակունյաց դարաշրջանից եկող Պարուար, Պարապատունիք և Պարսք տեղանունները, մանավանդ, երբ նկատի ենք առնում սրանք կրած շրջանների սահմանամերձ դիրքը: Ըստ «Աշխարհացոյց»-ի Պարուար (Պարվար) էր կոչվում Կուրի և Ալգետի միջև

42 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 40:

43 Նույն տեղում:

44 Լ. Մելիքսեթ-Քեչ, Նշվ. աշխ., էջ 157: Նույնպիսի սահմանապահ-բերդապահ զորամաս նկատի չունե՞ր «Քարթլիս ցխովրեբան», երբ հայոց Խարվանդ (Նրվանդ) թագավորի առնչությամբ վկայում է. «[Նրվանդը] ...գրավեց Քարթլիս սահմանները, քաղաք Մունդան և Արտահանը (Արտանը) մինչև Կուրը, և բնակեցրեց Մունդայում գաղանաբարո մարդիկ՝ դեբրին ազգակից, և կոչեց Մունդան [նոր] անունով՝ Քաջատուն, որ թարգմանաբար նշանակում է «Դեբրի տուն» (նույն տեղում, էջ 155): Հատվածի հայերեն հին թարգմանությունն է. «Ենտ այսոցիկ թագաւորեաց Հայոց մեծն Երուանդ, եւ էառ ի Վրաց զԱրտահան, մինչեւ ցԿուր գետ, եւ զքաղաքն Մունդայ. եւ բնակեցոյց ի նմա մարդ դիւախօս, եւ անուանեաց զնա Քաջատուն» (նույն տեղում, էջ 155):

45 Նույն տեղում, էջ 157:

ընկած գավառը⁴⁶։ Տեղանունն ունի իրանական (ամենայն հավանականությամբ՝ պահլավական) ծագում և ընդհանուր առմամբ նշանակում է «ամրացված շրջան», «պարսպապատ շրջան», «պատնեշված շրջան»։ Սրա համապատասխան իրանական բառ-տերմիններին հանդիպում ենք Ավեստայում (pairivāra «պարիսպ, պատնեշ, պատվար, ամբարտակ»), արամեական գրություններում (հին պարսկերենից փոխառյալ parvāra «արվարձան»), միջին և նոր պարսկերենում (parvar, farvar «պարսպապատ կառույց»), սողդերենում (prywt «պարիսպ»)⁴⁷։ Պետք է ենթադրել, որ հայ-վրացական սահմանից մինչև Ալգետ ձգված սահմանամերձ-սահմանապահ այդ գոտին կյանքի էր կոչվել ինչպես Հայաստանի հյուսիսային սահմանը «հյուսիսական» վաշկատուն ցեղերի և Վիրքի հնարավոր հարձակումներից պաշտպանելու, այնպես էլ նրանց դեմ հենարան ծառայելու համար։

Հայոց բանակի «արևելյան դռան» շրջանների շարքում Զորանամակը հիշատակում է Պատսպարունի (<«Պարսպատունի») նախարարությունը, որի տոհմանվան և Վասպուրականի Պարսպատունի գավառանվան միջև առկա ծագումնաբանական կապը մատնանշել էր դեռևս Ն. Ագոնցը⁴⁸։ Պարսպատունի նախարարների տիրույթն հանդիսացած նույնանուն գավառը տարածվում էր Արաքսի և Ատրպատականի միջև, համապատասխանելով այժմյան Իրանական Ադրբեջանի Սիահ-բուհ (Ղարադաղ) լեռնային շրջանին⁴⁹։ Որ Պարսպատունիքը ևս նախկինում եղել է սահմանամերձ-սահմանապահ մի շրջան, երևում է ինչպես նրա ծայրամասային դիրքից և անվան վերոբերյալ ստուգաբանությունից, այնպես էլ այն հանգամանքից, որ նրա և Ատրպատականի սահմանագլխին էր գտնվում ռազմատենչ կատիշների երկրից Հայաստան բերող Հայոց (Արմինիյան) լեռնանցքը⁵⁰։ Ընդ որում, Պարսպատունիքը հարևան Փայտակարան (Կասպք, Կասք) նահանգի հետ միասին հնում կազմելու էր սահմանամերձ-սահմանապահ մի գոտի՝ «պարս»-ը։ Այդ են վկայում ինչպես Փայտակարան նահանգի մյուս անվանումները՝ Պարսից երկիր (երկիրն Պարսից), Պարսից աշխարհ (աշխարհն Պարսից)⁵¹, այնպես էլ նրա ստրատեգիական կարևոր դիրքը։ Նախ, նրա վրայով էին Հայաստան ներխուժում «հյուսիսական» և արևելաանդրկովկասյան վաշկատուն ցեղերը, ապա՝ նրա և Ատրպատականի սահմանագլխին ընկած Կասպիական (այժմ՝ Սալավաթի) լեռնանցքով էր անցնում հյուսիս-արևելյան Ատրպատականից Հայաստան և Արևելյան Անդրկովկաս բերող ճանապարհները։

Այսպիսով, կարող ենք ենթադրել, որ հին Մեծ Հայքի հյուսիս-արևմուտքում ժամանակին գոյություն է ունեցել սահմանամերձ-սահմանապահ մի գոտի՝ «արս»-ը։ Ռազմավարական այս միավորը, ամենայն հավանականությամբ, ընդգրկել է հետագայի Սպեր, Արսեաց փոքր, Կղարքը, Շավշեթ, Աճա-

46 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 77, 86, 104։

47 Յ. Մ. Мурзаев, Очерки топонимики, М., 1974, с. 200; «Согдийские документы с горы Мур», вып. II (Юридические документы и письма), чтение, перевод и комментарии В. А. Лившица, М., 1962, с. 52. Ավեստ. pairivāra=պահլ. *parvār(a)>հայ. պարավար համապատասխանության տեսանկյունից հմտ. ավեստ. paitivāra=պահլ. *pativār(a)>պատուար (Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, I մաս, էջ 280)։

48 Н. Адонц. Уշ. աշխ., էջ 256, 321։

49 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 77։

50 Նույն տեղում, էջ 50։

51 Նույն տեղում, էջ 88։ Օրինակ, ըստ Փավստոս Բուզանդի՝ Ակա խնդրէր զվրժն մեծապես սպարապետն Մուշեղ յերկրէն Պարսից և Փայտակարան քաղաքէ, փոխանակ զի եւ նոքա նշկահեցին ստեցին արբային հայոց (տե՛ս «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 315)։

րա և Սամցխե գավառները⁵²։ Հստ երևույթին, Բագրատունի նախարարական տոհմի նախնիները «ասպետ»-ներ (*ասպետ < *արս-պետ) կոչվել են հենց այն պատճառով, որ գործակալական («ծեռական իշխանություն») հիմունքներով իշխել են Մեծ Հայքի հյուսիս-արևմտյան սահմանամերձ-սահմանապահ այս գոտում։

ОПЫТ ВЫЯСНЕНИЯ ПЕРВОНАЧАЛЬНОГО ХАРАКТЕРА ТИТУЛА «АСПЕТ» И ГОСУДАРСТВЕННОЙ ДОЛЖНОСТИ «АСПЕТУТЮН»

САРКИС ПЕТРОСЯН

Р э з ю м е

В аршакидской Армении существовал титул «аспет», который был наследственным в нахарарском роде Багратуни. Было несколько попыток этимологизировать этот титул и вскрыть первоначальный характер соответствующей государственной должности «аспетутюн». Но все эти попытки надо считать неудовлетворительными, так как, во-первых, игнорируют сообщения Хоренаци и Анануна (Анонима), и, во-вторых, основываются на таких сомнительных фонетических или семантических переходах, какими являются «аспет» < иран. *asparati; иран. *asūpat; иран. *viḍapati; иран. spāhpat.

Нами предпринята попытка дать новое толкование титула «аспет», который, по нашему мнению, является сжатой формой древнеармянского (незасвидетельствованного) термина «арспет»: *арспет < *арс («сторона», «край») + пет («глава», «начальник», «хозяин»), притом *арс из и.-е. *perk', а пет — из иранского pati.

Толкование титула «аспет» в значении «начальник края» (или «начальник окраины») перекликается с теми сообщениями Мовсеса Хоренаци и Агатангелоса, согласно которым первые носители этого титула — родоначальники Багратидов — были назначены правителями и военачальниками в ряде северо-западных окраинных земель древней Армении.

⁵² Սրանցից երկուսը՝ Աճարան և Սամցխեն, մինչև 37 թ. գտնվում էին Մեծ Հայքի կազմում, ապա անցան Վիրքին («Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 720, 836)։ Մյուսներից Կղարշը և Շավշեթը հետագայում մտնում էին Մեծ Հայքի աշխարհներից Գուգարքի, Արսնաց փորը՝ Տայրի, իսկ Սպերը՝ Բարձր Հայքի մեջ (անս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 34, 40, 59, 73, 79, 81 և կից քարտեզը)։